ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1959 Общественные науки

Գ. Ն. Գասպարյան

ՄԱԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մաթեոս Մամուրյանը մեկն է 19-րդ դարի երկրորդ կեսի այն առաջավոր հասարակական մտածողներից և գործիչներից, որոնք ռազմաֆեոդալական Թուրքիայի մռայլ պայմաններում իրենց ամբողջ գիտակցական կյանքն ու եռանդը ի սպաս են դրել հայ ժողովրդի մշակութային ու ազգային-քաղաքական ազատագրության վեհ նպատակին։

Մամուրյանը ծնվել է 1830 թ. Զմյուռնիայում։ Ուսանողական տարիները անց է կացրել Փարիզում (Մուրադյան վարժարան), ուր 1848 թ. ֆրանսիական ռևոլյուցիոն իրադարձությունները ունեցել են խոշոր նշանակություն՝ նրա հայացքների կազմավորման վրա։ Այդ տարիներին «երակներուս մեջ հանրավարի արյուն կշրջեր»,—գրում է նա՝ ինքնակենսագրական բնույթ կրող իր նամակներից մեկում[1]։

Սկզբում Մամուրյանը եղել է ազգային սահմանադրական շարժման ջերմ պաշտպաններից մեկը և որոշ ժամանակ պաշտոնավարելով որպես «ազգային խորհրդի» դիվանապետ, «խարազանի նման շաչել է պատրիարքարանի և ամիրայության գլխին»՝ հանուն սահմանադրական իրավունքների իրականացմանը, հանուն այդ իրավունքների առավել ընդարձակմանն ու դեմոկրատացմանը։ Իր ժամանակի առաջավոր թերթերում ու ժուռնալներում [«Մեղու», «Ծաղիկ», «Միություն» և այլն] երկար տարիներ իր «ուժերը փորձելուց» հետո, 1871 թ. Զմյուռնիայում հիմնադրել է «Արևելյան մամուլ»-ը, որը և խմբագրել է մինչև իր մահը (1901)։

Խմբագրական իր աշխատանքներին զուգընթաց նա երկար տարիներ տարել է նաև մանկավարժական աշխատանք, միաժամանակ ազգային վարժարանների համար գրելով հայոց լեզվի, քաղաքաանտեսության. հայ ժողովրդի պատմության, ընդհանուր ազգերի պատմության և այլ դասագրքեր, որոնք համարվել են իրենց ժամանակի լավագույնները։

Արևմտահայ իրականության մեջ Մամուրյանն առաջինն է, որ արժանացել է իր գրական-հրապարակախոսական և մանկավարժական գործունեության հիանալի հոբելյանի համազգային տոնակատարությանը (1899)։

Իր ամբողջ հասարակական գործունեության ընթացքում նա միշտ որպես ելակետ ունեցել է հայ ժողովրդի շահերի պաշտպանությունը՝ ընդդեմ ներքին և արտաքին բոլոր ճնշողների և առաջնորդվել է՝ հայ ժողովրդի ուժի և ստեղծագործական տաղանդի նկատմամբ իր տածած անայլայլ հավատքով։ «Ազգի մը մեջ ինչ մեծ, շքեղ և հրաշալի բաներ որ կատարվին՝ ժողովրդյան ուժովը կկատարվին։ ...Աշխարհիս մեջ մինակ մեծ ժողովուրդն է»,—գրել է նա և իր ժողովրդի ու նրա հայրենիքի բոլոր հատվածների ազատագրումը

---

[1] *Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, Զմյուռնիա, 1881, նամակ ԾԹ։*

[2] *«Ծաղիկ», 1867, № 138։*

դարձրել՝ իր բոլոր ձգտումների ու ամբողջ պայքարի առանցքը։ «Ազատությունը իմ կյանքս ու հավատս է» նշանաբանին հավատարիմ է մնացել նա իր ամբողջ կյանքի ընթացքում։

Մամուրյանի ազատագրական այդ ձգտումով է պայմանավորված այն անչափելի սերն ու նվիրումը, որ նա ցուցաբերել է Նալբանդյանի «հանճարեղ անձի» և նրա «մթիակ փրկավետ գրության» նկատմամբ։ «Նալբանդյանցը ինչպես կենդանության ատեն, նույնպես մահվանեն ետև պիտի գործեն ազգին մեջ, գրել է նա,—քանի որ շղթան և սուրը չեն կրնար կաշկանդել և սպանել այն լուսատու գաղափարները, որոց հռետոր կանգնեցավ նա և որոնք իբրև ամպրոպային փոթորիկներ կորոտան թագադիր բռնավորներու գլուխներուն վրա, մինչև որ փայլակն ու կայծակը պայթին և թագ ու գլուխ այրին, տոչորին...։ Նալբանդյանի ազատական հայրենասիրությունը անդադար հրավեր մ՝ ունի կարդալու մեզ և ազգը՝ նվիրական պարտք մը կատարելու»։ Մեր կարծիքով՝ Մամուրյանի հասարակական-քաղաքական հայացքների ու ձգտումների կրեդոն հանդիսացող նրա «Սև լեռին մարդը» պատմական վեպը ոչ այլ ինչ է, եթե ոչ Նալբանդյանի ու նրա ազատագրական ուսուցիոն ծրագրի նկատմամբ նրա այս վերաբերմունքի յուրահատուկ արտահայտությունը։

Այս և հարակից մի շարք հարցերի վերաբերյալ մեր տեսակետի հիմնավորումը թողնելով այլ պատեհ առիթի, տվյալ դեպքում հարկ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ իր հասարակական-քաղաքական և ազգային-ազատագրական համեմատաբար առաջավոր հայացքների ու ձգտումների դրսևորման ճանապարհին սուլթանական մահաբույր ցենզուրայի դամոկլյան սուրը այն աստիճան կախված է եղել Մամուրյանի գլխավերևում, որ ի թիվս իր հորինած և օգտագործած տպագրական յուրահատուկ մի շարք «գամմաների», նա շատ հաճախ—ավելի շատ իր ամբողջ հասարակական գործունեության ընթացքում—դիմել է նաև թարգմանության պրիսմին, ընդ որում թարգմանելով այնպիսի աշխատություններ, որոնք որոշ նկատառումով, նվազ նշանակալից չեն, քան նրա ինքնուրույն աշխատությունները՝ «Սև լեռին մարդը», «Հայկական նամականի»-ն, «Անկլիական նամականի»-ն, «Արևելյան մամուլ»-ում ցրված նրա բազմաթիվ տարեգրություններն ու այլազան հոդվածները։ «Մեզի հարմարագույն կթվին այն վիպական պատմությունները,—գրում է նա իր թարգմանություններից մեկին՝ Վալտեր Սկոտի «Իվանոե»-ին կցած իր առաջաբանում,—որ հուշակավոր հեղինակներու գործ լինելն զատ՝ մեր վիճակին, մեր կենաց գեթ անուղղակի նկարագիրն ընծայեն և ի լավ անդր դիմելու մեզ դրդիռ և հրապույր տան»[4]։

Ի դեպ այս նկատառումը տարածվում է նաև բազմաթիվ փիլիսոփայական այն հոդվածների վրա, որոնք մի շարք ինքնուրույն հոդվածների ու դրախոսականների կողքին, թարգմանաբար, թե քաղվածաբար հրատարակել է Մամուրյանը իր «Արևելյան մամուլ»-ում։

Հարցի բանասիրական կողմը թողնելով այլ պատեհ առիթի կամ այլ մասնագետների, մեր այս հոդվածի սեղմ շրջանակների ներած չափով փորձում ենք վեր հանել այն էականն ու բնութագրականը, որն հատուկ է Մա-

[3] Նույն տեղում, 1866, № 124։
[4] «Արևելյան մամուլ», 1871, էջ 34։

մուրյանի՝ առհասարակ քիչ ուսումնասիրված կուլտուրական ժառանգության մինչև այժմ ամենից ավելի անտեսված—եթե ոչ իսպառ մոռացված—կողմին՝ նրա փիլիսոփայական հայացքներին։

* * *

«Հին ու մեծ փիլիսոփայական դրությունները բան մը չեմ սորված, վասն զի սորվելու բան մը չգտա,—գրում է Մամուրյանի «Անկլիական նամականու» հերոսներից մեկը,—ամեն դար նոր բառ մը հնարեր է նույն բնազանցական գաղափարը մեկնելու, նույն առարկությունները ու փաստերը կրկնելու և վեճի տակ եղած խնդիրները լուծելու համար։ Մարդիկ լուծվեցան և այդ խնդիրները կմնան անլուծ, ուր որ են»[5]։

Ի տարբերություն և ի հակադրություն իր այդ հերոսի այս հայտարարության, Մամուրյանը ոչ միայն մեծ հետաքրքրությամբ է հետևել փիլիսոփայական մտքի ընդհանուր զարգացմանն ու ձեռք բերել խոշոր էրուդիցիա՝ փիլիսոփայության պատմության ընդգավառում, այլև, ամեն մի ուսմունքից ու հեղինակից սովորած լինելով մի որոշ բան և որդեգրելով յուրահատուկ մի էկլեկտիցիզմ, թարգմանական ու ինքնուրույն մի շարք հոդվածաշարքերով ու գրախոսականներով, իր հերթին, փորձել է լուծել ըստ իրեն մինչ այդ «անլուծ» մնացած մի շարք խնդիրներ և «փույթ» է տարել «պարզ և հասկանալի ոճով հանրացնելու» դրանք։

Մամուրյանը միաժամանակ—եթե ոչ առաջին հերթին—ներկայացնում է և իրեն, երբ խոսելով Թ. Ժոֆրուայի մասին, ասում է. «Ի սկզբանե անտի մարդիկ ծանր և դժվարավ կքալեն գիտության շավղին մեջ. ըստ որում պայքարը բուռն է նյութի և մտքի մեջ. իսկ հաղթանակն ստեպ անորոշ։ Սակայն կան նաև այնպիսի հոգիներ, որ այսինչ կամ այնինչ փիլիսոփայական դրության լիովին չհարելով՝ միջին ճամփա մը կընտրեն և իրենց հատուկ ըմբռնումով՝ մթինը կմեկնեն կամ կհերքեն, անորոշն որոշելու կճգնին և ինչ որ լուսավոր և մեկին է իմաստասիրական սկզբանց մեջ՝ ընդունելով պարզ և հասկանալի ոճով հանրացնելու փույթ կտանին»[6]։

Ուղղակի դնելով մատերիալիզմի և իդեալիզմի պայքարի հարցը, Մամուրյանը նկատում է, թե մատերիալիզմի ու իդեալիզմի միջև պայքարը թեև ընթանում է «օրինավոր սահմանի մեջ և հաշտվելու տրամադրությամբ», բայց և այնպես այս պայքարը անընդհատ է և անվախճան, քանի որ «եթե նյութական աշխարհը լայն ասպարեզ մը կրանա մարդկային հետազոտության, իմացականությունն ալ իր դերն ունի այս իրողության մեջ։ «Փիլիսոփայության երկու էական բաժանման,—գրում է Մամուրյանը,—ոգեկանության և նյութականության մեջ կռիվը դեռ դադարած չէ և միշտ պիտի շարունակվի թեև օրինավոր սահմանի մեջ և հաշտվելու տրամադրությամբ»։ Նա համոզված է, թե «միտքն ու ֆիզիկական աշխարհը, հոգվույն և նյութին երևույթները, նախնական ու վախճանական պատճառներու վեճը, ևն ու ոչ-ևն անդադար պիտի զբաղեցնեն մարդիկն ամեն փորձառական և դրական ճգնաց դեմ...։ Վասն զի եթե փորձն ու շոշափելի իրողությունը պետք է, որ լինեն ամեն նշմարտության և համոզման հիմն, եթե նյութական աշխարհը

---

[5] Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, էջ 116։

[6] «Արևելյան մամուլ», 1871, № 8, էջ 359։

լայն ասպարեզ մը կբանա մարդկային հետազոտության, իմացականության ալ իր դերն ունի այս իրողությանց մեջ, և անոր երևույթները, թեև շոշափելի, կան ու պիտի մնան Օ. Դոնտի այլանդակ դանդարանության և Փ. Բերնայի բնախոսության դեմ»:

Մեր կողմից ընդգծված այս տողերից պարզվում է, որ, ըստ Մամուրյանի, նյութական աշխարհը ոչ միայն ճանաչողության ասպարեզ է բաց անում, այլև իր հերթին ծառայում է որպես հիմք՝ այդ ճանաչողության համար: Այլ կերպ ասած՝ անհնար է պատկերացնել ճանաչողությունն առանց մատերիայի: Սակայն բանն այն է, որ միայն ու միայն մատերիայով էլ անհնար է պատկերացնել ճանաչողությունը: Ըստ Մամուրյանի, եթե նյութականը կազմում է ճանաչողության առավել շոշափելի ու հիմնական կողմը, ապա հոգեկանը կազմում է դրա անհրաժեշտ մեկ մասը, դրա մյուս անհրաժեշտ կողմը, առանց որի ամեն մի ճանաչողություն եթե ոչ բացարձակորեն անհնար, ապա անպայման միակողմանի է լինում: Ակնարկելով անգլիական մատերիալիզմը, նա գրում է. «Նյութական դպրոցը պատռեց մոգական լապտեր մ՝որու բոլորտիքը զմայլելով կդառնար մարդկությունը. բայց իր կանգնած նոր փարոսը միայն կասկածներով ալեկոծված և մոտեն իրողություններ շոշափելու փափաքող նավաբեկյալներ կլուսավորե, անհանդարտ, հետաքնին հոգիները կհրավիրե, մինչև վարն ու հեռուն անդունդները խոր մթության մեջ կձգե: Պետք է նոր հորիզոններ, նոր ափունք փնտրել, պետք է մտքով ալեկոծիլ ու նավաբեկիլ այդ փարոսին լույսը տեսնելու համար»[7]:

Ինչ խոսք, որ մինչմարքսյան մատերիալիզմը իր ամենաբարձր աստիճանում իսկ չկարողացավ իր պատռած «մոգական լապտերով» լուսավորել նաև հոգեկան ու հասարակական բարդ երևույթները: Բայց այդ մեղքը ոչ թե ընդհանրապես մատերիալիզմին է պատկանում—ինչպես այդ պնդում էր Մամուրյանը—այլ մինչմարքսյան մատերիալիզմին, որն հոգեկան ու հասարակական երևույթների բացատրության մեջ չկարողացավ ձերբազատվել իդեալիզմի կաշկանդումներից: Իսկ մարքսիզմին նա առհասարակ ծանոթ չէր, ուստի և չուներ անհրաժեշտ պատկերացում դիալեկտիկական մատերիալիզմի մասին: Այդ իսկ պատճառով՝ իրեն ծանոթ մատերիալիզմի անզորությունը վերագրելով առհասարակ մատերիալիզմին, այն համարում է «միակողմանի» և «ծայրահեղ»:

Այդ «միակողմանիությունն» ու «ծայրահեղությունը» նա գտնում է նրանում, որ այդ «նյութապաշտությունը» «գերագույն զորություն մը կուրանա. այլ կերպ ասած՝ կուրանա կրոնը, ըստ իրեն՝ բարոյականության աղբյուրը: Մամուրյանը նկատում է, որ 19-րդ դարում գնալով տարածվում ու ամրապնդվում է մատերիալիզմը: «Անկլիական նամականու» նրա հերոսներից մեկը, արձանագրելով այդ փաստը, գրում է, թե մարդիկ «շատ ուշ իմացան,—որ սկիզբ. վախճան, գոյություն, ճակատագիր, ժամանակ, հավիտենականություն դատարկ բառեր են և ինչ որ վերն երկինքը կինտրեին իրենց ավելի խելահաս հաջորդներն երկրի վրա ավելի դյուրավ գտնելու հաջողեցան մեր օրերը»[8]: Բայց նա գանգատվում է, որ գիտությունն ու մատերիալիզմը չեն

---

[7] Նույն տեղում, 1878, էջ 901—902:
[8] «Անկլիական Նամականի», էջ 146—147:
[9] Նույն տեղում, էջ 146:

մտահոգված մարդկանց հոգեկան պիտույքները գոհացնելով, և ահազանգում է, որ քանի այդպես շարունակվի այնքան ավելի վտանգ կա, որ մարդու «անասնական կողմը» զարգանա ու մեծարվի։ «Տակավին մարդկային ազգը միևնույն մանկության մեջ պիտի հարատևե,—գրում է նա,—ցորչափ չէ թե մարդկային բնության հոգեկան պահանջումները, այլ մարմնական պիտույքը գոհացնելու համար գիտությունը նորանոր գյուտեր կ՚նարե և մարդկային էակին անասնական կողմը ավելի հարգ, պատիվ և մեծարանք կգտնե, քան թե բարոյական կողմը»[10] և այլն։ Այդ իսկ առումով Մամուրյանը պատկերացնում է մի մատերիալիզմ, որն իր մեջ ընդգրկի և՛ իր ակնարկած «գերագույն զորությունը», և՛ մարդկային բարոյական կողմը։ Առ այդ նա հակադրվում է և՛ մատերիալիզմի ծայրահեղությանը, և՛ իդեալիզմի։ Մի կողմից՝ հակադրվելով մատերիալիզմի ծայրահեղությանը, նա գրում է. «Ճշմարիտ նյութապաշտն անկայուն չէ, չէ այն անհավատը, որ պատվո և պարտավորության զգացում չունի և մարդկային գործունեության ու վերջին գրգիռը կնկատե շահն ու հաճույքը»։ Մյուս կողմից, հակադրվելով իդեալիզմի ծայրահեղությանը՝ տերտերականությանը, նա գտնում է, որ ճիշտ չեն անում նրեյրըր և ուրիշներ, աստվածաշունչն ու արդի գիտությունը «հակոտնյայք» ցույց տալով և սուրբ գիրքը համարելով «ամեն գիտությանց հիմն ու աղբյուրը». և իր հերթին, բռնելով ավելի «շրջահայաց» ուղղություն, ձգտում է ոչ թե այդ երկուսի մեխանիկական հաշտեցմանը, այլ «յուրաքանչյուր արժեքը զատ-զատ գնահատելով... անոնց մեջ համաձայնություն մը գոյացնել»[11]։

Բնորոշ է, որ մատերիայի ու հոգու յուրահատուկ այդ համաձայնեցման հիմքում Մամուրյանը դնում է մատերիայի հավերժականության գաղափարը «ոչինչ չսեղծվիր յոչնչե». ամբողջ ստեղծագործությունը ոչ այլ ինչ է, քան եթե հավերժական մատերիայի այլակերպությունը. «Ցորենի շինությունը ոչ նվազ այլակերպություն մ՚է, քան լուցկիի տուփերու շինությունը», և այլ նման բազմաթիվ մատերիալիստական դրույթների հաճախ ենք հանդիպում Մամուրյանի մոտ։ Նա նույնիսկ պնդում է, որ «նյութը չի կրնար կորչիլ», «բնալուծական օրենքը ներգործեց ամեն ֆիզիկական, գերբնական և աստվածաբանական գաղափարներու վրա։ Ամեն իմացություն կամ եզրակացություն, որ համաձայն չէ այդ օրինաց հետ, իբրև անհիմն մերժված է»[12]։

Ավելին՝ Մամուրյանը պնդում է, որ շարժումը նյութի մշտական հատկանիշն է։ Ի հակադրություն բոլոր նրանց, ովքեր «ամեն բան միանգամայն և միապաղաղ, հավիտենից անսասան կհոչակեն»[13], Մամուրյանը պնդում է, որ բնության մեջ ամենուրեք գործում է այլաշրջության՝ էվոլյուցիայի օրենքը։ «Այլաշրջության օրինոք բնության մեջ ինչ որ պարզ է՝ բարդ, ինչ որ մենավոր է՝ ընկերային, ինչ որ համասեռ է՝ այլասեռ դառնալու կձգտի»[41] և այլն։

---

[10] Նույն տեղում, էջ 146։
[11] «Արևելյան մամուլ», 1892, էջ 39։
[12] Նույն տեղում, 1891, էջ 471։
[13] Նույն տեղում, 1898, էջ 3։
[14] Նույն տեղում, էջ 39։

Մամուրյանը գարմանում է, թե «ինչպես երբեմն ամեն երևույթ՝ բարոյական և ֆիզիկական, բնկերական և քաղաքական, տնտեսական և տնական, միակ պատճառի մը՝ նախախնամության կվերագրվեր...»[15]: Նա գտնում է, որ ինչպես անօրգանական, այնպես էլ օրգանական աշխարհում, բոլոր երևույթները ենթարկվում են այլաշրջության համատարած օրենքին. «Երբ Պահվելը գտավ լուրևի (քիմիական մի տարր),— գրում է նա,— գործարանավոր և անգործարանավոր մարմիններու մեջ եղած դիծը վերացավ»[16] Մարդը նույնպես հանդիսանում է գործարանավոր մարմինների մեկ օղակը, թեև բարձրագույն օղակը: Մամուրյանը չի հավատում մարդու ծննդյան և զարգացման մասին աստվածաշնչային առասպելին: Ինչպես նրա ֆիզիկական, այնպես էլ հոգեկան և իմացական կարողությունները հետևանք են այլաշրջության բնական օրինաչափության: «Մարդս՝ բնության լերկ ու մերկ ծնունդ,— գրում է նա,— տակավ մարմին. միտք կընդունի, զանազան ֆիզիկական տարրներու դեմ շփվելով՝ կսրեի իր բանականությունն, անհուն, անհպելի երկնային մարմիններու և մետեորական շարժումներու առջև սլաց կտա իր երևակայության, որ վերանալով դեպի գերբնային իրերու սահմանները, Արարիչ մը կփնտրե, սարսափահար կաղոթե, կրոնական զգացման ճշույլն իր սրտին մեջ կծագի, և երբ հաստատ բնականության, բնտանեկան կազմակերպության, բնկերային հարաբերության պետքը կզգա, կզգա նաև տաճարներ, ատրուշաններ կանգնելու, Անծանոթին զոհեր մատուցանելու և հոգվույն անձուկներուն զոհացում տալու հարկը»[17]:

Ինչպես պարզվում է մեր կողմից բնդգծված այս տողերից, հակվելով դեպի մատերիալիզմը, Մամուրյանը գտնում է, որ ոչ թե մարդն է ծնվել աստծուց, այլ բնդհակառակը: Այսպես նաև բարոյականության մասին: Մարդու բարոյական աշխարհը նույնպես հետևանք է նրա հասարակական կյանքի էվոլյուցիոն զարգացմանը: «Եվ իրոք,— գրում է նա,— մարդ՝ նախնական վայրենի վիճակի մեջ բարվույն և ճշմարտին զգացումն լիովին զուրկ՝ անասնական բնազդներու և արյունարբու հոժարությանց դերի, ի՞նչ բարոյական կրնար ունենալ, եթե ոչ կրից հաղուրդ տալու, իր որսն ուր որ գտներ պատառելու և լափելու բարոյականն: Այն ինչ բնկերական վիճակի մեջ կմտնե և ահա մարդ՝ նոր պիտոյից և հարաբերությանց բերմամբ՝ կրից չափ կդնե, փոխադարձության պետքը կզգա, երբ մանավանդ բնտանեկան կապեր կկազմե և իր օգուտը կտեսնե փոխադարձ պարտուց և իրավանց կատարման մեջ, իմարկե սահմանափակ շրջանի մեջ»[18] և այլն:

Բանականությունը, որն իր հերթին «մարդը կապիկներե զանազանող հատկությանց մեկն է»[19], ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդկային էվոլյուցիոն զարգացման արդյունք, որն ունի երկրային ծագում և գործում ու կարգանում է արտաքին աշխարհի ներգործության տակ: Տալով բանականության ծագման ու գործունեության բացատրությունը, «մարմինը ներքուստ շարունակ կզործե,— գրում է Մամուրյանը,— այս անդուլ շարժման մեջ՝ ջղային դրությունն, որուն գա՞ն է ուղեղը, արտաքին տպավորություններ կընդունի,

[15] Նույն տեղում, 1890, էջ 494:
[16] Նույն տեղում, 1891, էջ 41:
[17] Նույն տեղում, 1893:
[18] Նույն տեղում, էջ 26:
[19] Նույն տեղում, 1893, էջ 189:

զգացությունը կդրդոն, գաղափարներ կհորինն, խորհուրդներ կրագադրե, որ իրեն հաճելի երևցած կերպով ի գործ դնե։ Գործողության միջոցին անտարբեր չէ ուղեղը, որուն զանազան ձգտումներն այս կամ այն ուղղությունն կտոնուն արտաքին պարագայից ազդեցությամբ»[20] և այլն։

Մամուրյանը խուսափում է որևէ բացատրություն տալուց հոգու էության մասին, նա պարզապես հաստատում է նրա ապրիորի գոյությունը. բայց և նկարագրում ու ընդգծում է այն հատկությունները, որոնք ճանաչելի են դարձնում այն և զատորոշում՝ մատերիայից, իրերից։ «Ինչպես որ իրերն իրենց հատկության միջոցով կճանաչվին. նույնպես կճանաչվի հոգին կարողության միջոցով։ Հոգին կզգա, կխորհի, կհիշե»[21]։

Մարդկային հոգու բոլոր կարողությունների վերևում, որպես դեկավար, նա պատկերացնում է մի «անձնական զորություն»։ «Մարդկային հոգվո մեջ,— գրում է նա,— բնական ընդունակություններ կան և անոնցմե վեր անձնական զորություն մը, որ զանոնք կվարե»[22]։ Մամուրյանն այդ «անձնական զորությունը» համարում է տարբերիչ ուժ մարդու և անասունների միջև։ Առանց դրա առկայության մարդը իր է, դերի ճակատագրի ձեռքում։ Իսկ երբ նա ներգործի՝ մարդս կարող է վերածնվել և «իբրև վեհապետ մտնել այն լքյալ կարողության մեջ և զանոնք ճակատագրի ձեռքեն խլել... Մարդս լիովին այն իշխանության մեջն է, որով ինքն իրեն կտիրանա. այս իշխանության գործողությունն է, որ զինքը կստեղծե, կկազմե»[23]։ Ինչպես անօրգանական, այնպես էլ օրգանական աշխարհի մյուս բոլոր երևույթներից մարդը, ըստ Մամուրյանի, տարբերվում է նրանով, որ նա օժտված է «անձնական զորությամբ», այլ կերպ ասած՝ իր «բնական զորությունները» ճանաչելու և իր կամքի ուժով դրանք ի գործ դնելու, դեկավարելու կարողությամբ։ Մամուրյանի մոտ «ակտիվ կամքը» ինքնին ոչ այլ ինչ է, եթե ոչ տարբեր մեկ ձևակերպումը նրա ըմբռնած «անձնական զորությանը»։ Ըստ Մամուրյանի և՛ հոգու աշխարհը, և՛ մարմնի աշխարհը ենթակա են մի ընդհանուր օրենքի, սակայն հոգու աշխարհը ճանաչելիության տեսակետից ունի իր օրենքները, իսկ մարմինը՝ իրենները։ Որոշ սահմանների մեջ մնալով հանդերձ, մարդիկ կարող են ճանաչել բնության օրենքները և դեկավարել դրանք. «Խոստովանելով հանդերձ, որ մարդկային կենաց ամեն գործողության նկատմամբ չկա այն բացարձակ կամ տեսական ճշմարտություն, որու կձգտին անդուլ մարդկային հոգին ու իմացականությունը, ոակայն պետք չէ նաև ուրանալ, թե կարգ մը բնական երևույթներ, որոց օրենքը, գիտությունը փորձով գծած ու գտած է, մարդկորեն ճշմարտության դրոշմը կկրեն (ընդգծումն իմն է—Գ. Գ.) և գիտական հավատալեաց կարգն անցած են ամենուրեք»[24]։

Սակայն, չնայած բարոյական նորմաների վերաբերյալ Մամուրյանի վերոհիշյալ մատերիալիստական դրույթներին, նրա մատերիալիզմի անհետևողականությունը՝ իդեալիզմն ու մետաֆիզիկան նրա աշխարհայացքում իրենց զգացնել են տալիս հենց որ ըստ էության ենք մոտենում նրա նույն այդ

[20] Նույն տեղում, 1881, էջ 389։
[21] Նույն տեղում, 1872, էջ 203։
[22] Նույն տեղում, 1872, էջ 205։
[23] Նույն տեղում, էջ 242։
[24] Նույն տեղում, 1895, էջ 194։

թարոյագիտական հայացքներին, նրա կրոնական հայացքներին։ Բարոյականության մեջ, ըստ Մամուրյանի, զուգահեռաբար և միաժամանակ առկա են փոփոխական ձևն ու հավերժական կատեգորիկ կանոնները։ Նա պնդում է, որ կան բարոյական «կարգ մը կանոններ ու հրահանգներ իբրև տիեզերական ճշմարտության հայտարար կետակներ։ Այս «կետակներու ոճն ու ձևը կփոխվին, իրավ, սակայն ներքին ոգին ու ուղղությունը նույնն են»[25]։ Աթեիստների հիմնական սխալը նա համարում է այն, որ նրանք անտեսում են կրոնը, որպես բարոյականության աղբյուրը, այդ երկակի բնույթը, և նրա փոփոխական ձևը իբր չփոթելով նրա հավերժական բովանդակության հետ՝ բացասում են վերջինը, փոխանակ քննադատելու սոսկ առաջինը։ Այդ տեսակետից միանգամայն բնորոշ է այն դիրքորոշումը, որ Մամուրյանը ցուցաբերել է մինչմարքսյան հայ փիլիսոփայական մտքի աթեիստական-մատերիալիստական կոթողը հանդիսացող «Մեթոդի» նկատմամբ։ Նա ամենից առաջ վրդովմունք է ցուցաբերում այն բանի համար, որ «Մեթոդ»-ում իր «մտերիմ բարեկամը»՝ Տ. Կոստանդյանը, «կարծես թե կրքոտ և քինախնդիր մարդու մը դեմքով կներկայի, որ ձեռքը տապար մը առած աջ ու ձախ կզարնե, կկոտրե, կվիրավորե, կսպանե՝ և երբեմն հաղթանակ տարածի պես՝ կծիծաղի, կհեգնե և ծանր ու խոշոր բառեր կգործածե կրոնական համոզումներու դեմ և մանավանդ քրիստոնեության դեմ, ընթացք մը որ բնավ խոհուն գիտունի մը չվայլեր»[26] և այլն։ Մամուրյանը զայրանում է, որ «հավատը տղայական, անհեթեթ, ծիծաղելի սկզբունք» է անվանում. «Մինչդեռ,—գրում է նա,—իր փաստաբերության հակառակ հավատք ու կրոն կտիրապետեն մարդկության սրտին ու մտքին մեջ»[27] և այլն։ Մամուրյանը ի վերջո մեղադրում է «Մեթոդի» հեղինակին նրա համար, որ նա չի տարբերում քրիստոնեության ձևը, որն անշուշտ դարերի ընթացքում, «պաշտոնեից տգիտության, մոլեռանդության ու մարդկային կրից» հետևանքով փոփոխական ու թյուր մեկնությանց ենթարկվել է—զուտ սկզբունքներից, որոնք իբր ոչ մի կապ չունեն քրիստոնեության «պատմական տխուր և արյունալի երևույթների» հետ։ «Հարկե քրիստոնեությունն պատմական տխուր և արյունալի երևույթներ ունի,—գրում է Մամուրյանը,—սակայն մութ դարերու արարքն ոչ այնքան քրիստոնեական զուտ սկզբանց հետևություններ են, որքան անոնց տրված թյուր մեկնությանց, պաշտոնեից տգիտության, մոլեռանդության ու մարդկային կրից արդյունքն են»[28]։

Մամուրյանը պնդում է, որ կրոնը դարերի ընթացքում ենթարկվում է փոփոխությունների և գնալով կատարելագործվում է, սակայն այդ վերաբերում է կրոնի սոսկ արտաքին կառուցվածքին, ինչ վերաբերում է նրա ներքին բովանդակությանը՝ դա խղճի ազատությունն է, և դա կապված է մարդկային սրտի հետ, և որպես անջնջելի մի զգացմունք հարատևելու է հակառակ իբր թյուրիմացաբար գործ ածված գրչի ու սրի հալածանքներին։ «Չենք ուրանար,—գրում է նա,—որ, ինչպես ամեն բան, կրոնն ալ կատարելագործության ենթակա է, քանի որ մարդկությունը անցական չէ. սակայն չենք ընդունիր՝ Մեթոդի հեղինակին պես որ պետք է և կարելի է դայն գրչի ծայ-

[25] Նույն տեղում, 1897, էջ 441–442։
[26] Նույն տեղում, 1898, էջ 132։
[27] Նույն տեղում, էջ 132։
[28] Նույն տեղում, էջ 132։

բով սրբել մարդկային սրտեն ու հիմնարկությունեներեն. վասն զի կարելի չէ ջնջել մարդկային սիրտը, և ինչպես որ էդ. Հարաման կրսե, ամեն մարդ կրոնական տրամադրության մը սերմն ունի, չենք ընդունիր այն թուլլտվությունն (intolérance) և ասոր հետևանք եղող հալածանքը թե՛ գրչով լինի, թե՛ սրով, վասն զի կրոնական կատարելության, լուսավորության և համազգային սիրո էական մեկ պայմանն ալ խղճի ազատությունն է»[29].

Այլ կերպ ասած՝ Մամուրյանը ո՛չ թե դեմ է կրոնի, այլ սոսկ կրոնական խարությունների, որոնք նա համարում է պարզապես տգիտության ու շահամոլության արդյունք, և հավատում է, որ բոնի կերպով կրոնի բոլոր արտահայտությունները, «միության վերածելու» բոլոր փորձերը պարզապես ստրկության շղթաներն են ամրապնդում, այլ, ընդհակառակը, կրոնական անսահման ազատությունը՝ հարակցելով նրա երևակայած ճշմարիտ լուսավորության հետ, պիտի կարողանա ի վերջո զանազանել կրոնի արտաքին ձևապաշտական կողմը, և գտնելով բուն էությունը, պիտի առաջնորդի ազգային ազատ եկեղեցիների կազմավորմանը, եկեղեցիներ, որոնք բոլորն էլ հիմված լինելով միևնույն սրտի ու նրա կրոնական զգացմունքների վրա՝ վերջ պիտի տան «թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհական բուռն իշխանության, պաշտոնական կրոնից և արքունի երկնային իրավանց օրը պիտի անցնի» և «ազգային անկախ եկեղեցիներու դարը պիտի հաջորդն և մարդկային ազգը բարոյական միության տարերքը պիտի դտնե։ Բայց այս հեղափոխությունը մեթոդներով չի կատարվիր, հրով և սրով չիրանար, այլ գիտությամբ, այլ ազգերու հառաջադիմական բարեշրջումի օրինոք (ընդգծումն իմն է — Գ. Գ.), որու կարևորությունը կհոչակե, սակայն Մեթոդի հեղինակն և միայն ժամանակներն ու միջավայրերն իրարու հետ կշփոթեն»։ Այլ կերպ ասած Մամուրյանը հավատացած է, որ ամեն մի բոնի միջոցառում կրոնի դեմ հարվածում է ուղղակի մարդկային սիրտը, նրա բնությանը հատուկ զորությունը, և որ բարեշրջության՝ էվոլյուցիայի օրենքը այստեղ խաղալու է իր փրկարար դերը՝ դարերի բարդած մանվածապատ «խորտուրդներին» միջից, մարդկային ժամանակավոր ածանցումների ընդերքից դուրս բերելով կրոնի բուն էությունը, նրա գերբնական անանցանելի կողմը։ «Շոպենհաուեր սքանչելի կերպով ցցուց, — գրում է Մամուրյանը, — թե ամեն մարդ գերբնականություն մ ունի, ամեն մարդ գերբնային հղացումներու պետք ունի իր կրոնական պիտույքը գոհ ընելու համար։ Այս գերբնականությունը, զոր կարելի է անվանել ժողովրդային գերբնականություն, կրոնն է։ Արդ՝ կրոնը ժողովրդյան բոլոր փիլիսոփայությունը կպարունակե. այն կազդարարե շարունակ անոր, որ ուտելե, խմելե և քնանալե ավելի (իմա՝ մարդու կառուցվածքի նյութական, մարմնական կողմի պահանջներից ավելի — Գ. Գ.) բարձր բան մը կա, թե այս զգալի անցավոր աշխարհն առանց նպատակի չէ, այլ հավիտենական սկզբի մ՝ արտահայտությունն է, որու միայն շփոթ ստվերը կտեսնենք այստեղ։ Բոլոր կրոնից պաշտոնն է այս զգացումը հոգվո մեջ արթուն պահել...»։ Հայտնի է, թե աշխարհի գրեթե բոլոր կրոններն այս իդեալանն՝ բանականության անիմանալի խորհուրդներով լոկ արտաքին ցույցեր և պաշտաման այլևայլ հանդիսավոր արարողություններ դարձած են։ Աստվածաբաններն են, որ կրոնից

---

[29] Նույն տեղում, էջ 327։
[30] Նույն տեղում, էջ 343։

այս չոր ու ցամաք ուղղությունը տվին, այնպես որ բարոյապես չի ներգործեր շատ տեղ մարդկային կենաց վրա»[31]։

Բանն այն է, որ փոխանակ իր վերևի դրույթներից համապատասխան եզրակացություն հանելով ասելու, որ գերբնականը վեր է մարդկային հասողության սահմաններից և ըմբռնելի է միայն հավատքի հիման վրա, նա, Հարմանին ձայնակցելով պնդում է, թե «գերբնականությունը գիտության կվերարերի, թեև ամեն մարդու տրված չէ դիտության հասնել, նամանավանդ գերբնականության գիտական ուսման»[32]։ Այլ կերպ ասած՝ մի կողմից թեև նա պահանջում է գերբնականը ենթարկել «գիտական ուսման», բայց մյուս կողմից՝ դրա տակ հասկանում է ոչ թե գերբնականի շրջանակների նվաճումը գիտության, մատերիալիզմի կողմից, այլ ընդհակառակը՝ «գիտությունն» հասկացության կամայական տարտամացումն ու ընդլայնումը՝ խեղաթյուրումը։

Մամուրյանը «կույր հոգևպաշտ» չէ, քանի որ, ինչպես տեսանք, կանգնած լինելով իր ժամանակի բնագիտության որոշ նվաճումների բարձրության վրա, նա, թեկուզ ոչ հետևողական մատերիալիստական դիրքերից, պայքար է ծավալում միջնադարյան խավարամոլության, գերբնական ուժերի և բնական հոգևոր ու հասարակական բազմաթիվ երևույթների բիբլիական բացատրությունների դեմ։ Մյուս կողմից՝ Մամուրյանը «ծայրահեղ սկեպտիկ» էլ չէ, քանի որ ինչպես տեսանք, կանգնած լինելով կրոնի սկզբունքային պաշտպանության դիրքերում, հատկապես բարոյագիտական իր հայացքներում հանդես է գալիս որպես «խղճմտանքի» ինկարկու և սպասարկու՝ մարդկային սրտի գերմարդկային ձգտումների։ Սուբյեկտիվորեն հեռու փախչելով և՛ «ծայրահեղ սպեկտիկությունից» և՛ «կույր հոգևպաշտությունից», Մամուրյանը օբյեկտիվորեն տատանվում է «գաղափարականության»՝ իդեալիզմի և «նյութապաշտության»՝ մատերիալիզմի այլևայլ ճյուղերի միջև, դրանով իսկ արտահայտելով հակասական իր աշխարհայացքի սերտ առնչությունը այն ժամանակաշրջանի ու միջավայրի հետ, որոնց մեջ ապրել ու գործել է նա։ Մամուրյանի աշխարհայացքի այդ հակասականությունն ու նրա մատերիալիստական ձգտումների տնավարտությունը հետևանք են ռազմա-ֆեոդալական Թուրքիայի հետամնաց ու հակասական սոցիալ-քաղաքական պայմանների։ Նկարագրելով այդ միջավայրն ու պայմանները, նա գրում է. «Երբավ է, որ այստեղ ամեն բանե ավելի ուշ գրավող ինդիրը կրոնն է։ Միջին դարու մեջ ենք։ ...Ինքրնի ու Նյութրնի անունն իսկ անծանոթ է այս աշխարհին։ ...Ամեն բան կրոնին չափովը կչափեն, երկինքն երկրի փորձաքարը կրնեն»[33] և այլն։

Նկարագրված այդ միջավայրում ու պայմաններում Մամուրյանի փիլիսոփայությունը այն առումով և այն չափով է առաջավոր, ինչ առումով և ինչ չափով, որ նա շեղվում էր կրոնից դեպի գիտությունը և հակադրվում եկեղեցուն՝ միջին դարու գաղափարական այդ միջնարերդին։

---

[31] Նույն աեղում, էջ 344։
[32] Նույն տեղում։
[33] Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, էջ 164։